



55. ՌԵՍՆ ՈՒ ՓԱՇԵՆ

Ժամանակով Մշու փաշեն գելնա էրկիր գվոնե, գիկա հասնի  
դաշտի գեղ մե, ոեսին խոնախ կէղնի, գեղացու հալ ու վախթ կը  
հարցու:

Ռես մըշ ուր մտքին կըսե.

«Գոյա ինք չը գինա ղժողովրդի հալ ու վախթ, հլա կը հար-  
ցու լե: Չէ՛, խսա-խարար օգուտ չէնե, կանի ըզոր դաս մե տամ»:

Կերակուլի ժամանակ ինչ ըսիս կը դնին վըր սեղնին, հետ լս  
էրկու գլգլե հաց:

Փաշեն կը հարցու.

— Ռե՛ս, իդոք ի՞նչ ին:

— Փա՛շա աֆանդի, ըզոց «կակղնաս-կուտիս» հաց կըսին,—  
կըսե ոես:

Օլոր օր ղփաշեն կառնե կերթա սար՝ նեճիր: էլ սար ու ձոր, էլ  
դար ու դուզ չը մնա կը գվոցու, փաշեն կանոթնա:

— Ռե՛ս,— կը հարցու փաշեն,— հմա՛լ իմ անոթցի, օր բեր-  
նիս ջուր կէրթա, ըսկի հաց չկա՞ քու մոտ:

Ռես կը հանե գլգլե հաց մե, կիտա փաշին, փաշեն գաթի պես  
կը խխմե:

«Կե՛ցի,— կըսե ոես մըշ ուր մտքին,— հլա դըռ շա՛տ կը կակ-  
ղընաս»:

Մեկ-էրկու սհաթ քետե փաշեն կը բոռա.

— Ռե՛ս, էն համով գաթից էլ չկա՞, շա՛տ իմ անոթցի:

Ո՛հս դւգլն հաց մ'լն կիտա փաշին, օր իշթայով կուտն, ո՛հս  
կր ծիծղա, կրսն.

— Փաշա աֆանդի, ըշտն «կակղնաս-կուտիս» հացն է՛դ է, մեր  
կէրածն է՛դ է, ըդրա դորա լն քիմցի, թն ժողովրդի հալ ու վախթ  
աղն՝ կ է, թն՝ վատ:

